

տէրութիւն չունի. — դրանք ճափոնացի գաղթականներն են: ճա՞փոնացիք ցրուած են ամբողջ Կորէայում, սկսած Մանջուրիայի սահմաններից մինչև հարաւային հրուանդանք: ճափոնացու գաղութներն ու ճափոնական քաղաքամասերը Կորէայի քաղաքներում միշտ լաւ են կառավարուած, բնակիչների բարեկեցութիւնն էլ ծաղկում է: ճափոնացի բանուորը, հասարակ դուլին, շուտով հաստատուած է Կորէայում, մի կտոր հող է գնում, կամ թէ չէ մի փոքրիկ խանութ է վարձում: Կորէայի բանուորը, տեսնելով սյգ, ի հարկէ ինքն էլ ցանկութիւն է յայտնում նոյն կերպ վարուելու և աշխատում է նմանուել ճափոնացի գաղթականին: Յամենայն դէպս անկասկած է, որ ճափոնական իւր գաղութների և գաղթականների շնորհիւ խաղաղ ճանապարհով կարող է Կորէան նուաճել:

ճափոնական առևտրական նաւատորմիցը վերջին աստնամեակում շատ վիթխարի չափով մեծացաւ: Ասիայի ամեն մի ծովի, ամեն մի գետի վրայ այժմ լողում են ճափոնական նաւերը, որոնք երթևեկում են նաև ովկիանոսների վրայ և հասնում Ամերիկա, Եւրոպա և Աւստրալիա: Նրանց նաւերի վրայ տեղափոխուող ապրանքների և ծովադնաց ճանապարհորդները թիւը շարունակ մեծանում է. այս դէպքումն էլ ճափոնեան ուսուցչի դեր է կատարում ասիացի ժողովրդների նկատմամբ, որովհետև իր անձնական օրինակով նրանց ցոյց է տալիս, թէ սեփական ջանքերով ինչ հետեանքների կարելի է հասնել, և սովորեցնում է նրանց առանց Եւրոպայի և Ամերիկայի օգնութեան առաջ գնալ:



ՅԱԻԵՆՈՒԱԾ «ԱՐԱՐԱՏԻ» 1902 թ. ՆՈՅՆԻԵԿՏ.

Պատմութիւն յաղագս գիւտի նեխարաց սրբոյն Գրիգորի  
Հայոց Մեծաց Լուսաւորչի.\*

Ի ժամանակին յորում հայ թուականն Յիւլէրոս առաքեալ լինի ներքինի ոմնս անուն նորա Նիկոմիդոս՝ ի վասիէ կայսերէ յունաց, հրեշտակութեամբ աւ Աշոտ իշխանաց իշխան ի Հայս հանդերձ սրատուոյ ընծայիւք և վայելչական պա-

\* Ձեռագիր ճառընտիր հ. 940. դ. ձեռք.

նաստեղծիցն պերճարանեալս որոց նիւթ բանականութեան է ստութիւնս իսկ մերոցս սուրբս որ ի Քրիստոս հաւատացելոցս ճշմարտութիւն ամենայն ուրեք յայտնէ զինքն սիրողաց զանխլանաւքս ի բազում աննուաճ խորհրդոց՝ ո՛չ արժանաւորս զոչ խաւարեալ միտս նոցա նկատել զիւրոյ պայծառութեանն լուսաշարդութիւնս։ Արդ՝ նորոգեցէք զմիտս և զխելիս ձեր առ ի լսել զգարմանս սքանչելեաց պատմութեանս յորում վերստին փայլեն մերոյ Լուսաւորչին և նախաշարժ վարդապետին սիրադորձութեանն ճառագայթք։

Ի ժամանակս Միքայէլի կայսերս որդւոյ Քէոփիիլեայ և մաւր նորա Քէոզորայի սատուածասիրի և բարեպաշտուհւոյ՝ ներքին նապեառմնս անուէն նիկոմիդոսս որ զմեծագոյնն ստացեալ ունէր պատիւ պառտոստութեանս գոլով իբրև զհայր և զաւաջնորդ բոլոր սպասաւորացնս որք ի տան թագաւորին սպասաւորէինս և ընդ ձեռամբ նորա էին նուաճեալ առհասարակ որք ի ներքինեացնս և թագուհին ևս՝ սքանչելիս ընկալեալ զպատիւ ճոխութեանս առ որում և ես իսկ բնակեալ՝ սպասաւորէի նմա ազնուական մեծութեանս ի մէջ սպասաւորական նահանգինս յորում մտերմարար իմն յորդորէր ի սպասաւորութիւն՝ ցանկացեալ խոհեմական և հանձարեղ նորա վարուց և կարգաւորութեանցս առ ի դաստիարակել զչքնաղ փառաւորութիւնսն ի նորայն վեհագոյն կորովութենէ։ Էր նորա պատանեակ մի ընդոճինս ի նահանգէն կոչեցեալ Աղլաւք՝ որ ունէր այս պիղծս ո՛չ փոքր ինչ տաժանեալ ուխտից և սրբոց պարապեալս առ ի լուծումն իւրոյ վտանդաւոր պատահմանն և ո՛չ ուստեք գտեալ բժշկութիւնս հանգոյն կնոջն այնս որ վտանգեալ ի բազում ժամանակաց և վտանեալ զինչս իւր և ոչինչ հանդիպեալ անդորրութեանս ըստ որում յաւետարանական սպամի ճառս Վոյրով նորա ի աեղի մի թագաւորական քաղաքինս որում անուանեալ էր Քասինս յորում եկեղեցիք երեք էին ձեռակերտեալք՝ անուանեալ մինն Միասնական երրորդութիւն սուրբս և երկրորդն յանուն նախասարկաւազին և վկային Քրիստոսի սրբոյն Ստեփաննոսի և երրորդն յանուն ամենայաղթ կենսաբեր և Քրիստոսընկալ սուրբ Խաչինս — և ժամանեալ ներքինապեան

այնչ զոր վերագոյն ասացաք՝ Նիկոմիդոսս և մտեալ ի սուրբ  
 Աթուղիկէ եկեղեցինս յորոյ վերայ սուրբ Երրորդութիւնն  
 կոչիւր անունս յորում զիրք մի մարմարիտնեայ պատեալ  
 արծաթով ի հիմանէ եկեղեցւոյնս առ որմն սուրբ տաճարին՝  
 ի բազում ժամանակաց պնդեալ և աղխեալ զոր միայն  
 նշխարս զոյ խորհրդածէին սրբոց ոմանց և անձանօթից  
 ոչինչ զոք ի նոցանէ՝ ծանուցեալ անուամբ և ժամանակաւ:  
 Եւ ի մտանեւն նորա անդ և պատանին ընդ իւրս և իմ  
 առնն թեր Տեառն իմոյ և իսկոյն յանկարծակի գոչեաց պա-  
 տանին ուժգին աղաղակելով և շարժեալ սաստկապէս դո-  
 զացաւ և ի ձայն մեծ բողոք բարձեալ ասէ. Ո՛ մեծդ Գրի-  
 գորիտս եկեալ յաշխարհէն Հայոց դատե՛ս զիս հանելով ի  
 բն սկուծենէս յայսմանէ և զո՛ւ Հռիփսիմէս եկիւր ի Հայոց  
 նեղել զիս և զո՛ւ ևս Գայիանէ և որ ընդ ձեզ սուրբք են  
 հանդերձ Սարգսիւ և Բագոսիւ՝ եկեալ կշտամբէք զիս: Եւ  
 ասացեալ զայս ի լսելիս ժողովրդեաննս զիմեալ զարկաւ ի  
 վերայ տապանինս և ժայտբումն յոյժ լինէր ի պատանւոյն՝  
 զոր ոչ զիտացաք զինչ ոք էր: Եւ փութացեալ քահանայիցն  
 ի բաց մաքրեցինս զոր արտաքս երեւ պատանին: Եւ եկեալ  
 ի միտս պատանւոյն և եղեալ ի զգաստութեան մեծի՝ ան-  
 կանէր առ ոտս տեառն իւրոյ Նիկոմիդեայ ասելով. Ո՛վ տէր  
 իմ յաղթեցին աղաւթք քո սուրբ և ընդունակ և վկայքս  
 որ կան ի տապանի աստ բժշկեցին զիս ազատելով ի չար  
 այտոյն պղծոյ: Յայնժամ առաքեաց Նիկոմիդոս զեկուցանել  
 Այտախոսի Պապիոսիս որ էր վերակացու եկեղեցւոյն և իշ-  
 խանութիւն ունէր բանալ և փակել զգրունս պաղատանն  
 արքունիս և ասէ. Բեր այսր զբանալի տապանիս այսորիկ  
 զի ծանիցուք թէ զինչ իցենս որ ի սմա կայցին: Իսկ նա հրա-  
 ժարէր և ոչ իշխէր համարձակել առանց հրամանի կայսերն:  
 Զեկուցանէր արքայինս և ընկալեալ հրաման բերեալ զբանալինս  
 և ջան ոչ փոքր էր բանալոյ յարկինս և ոչ կարացին բանալ  
 զտապանն: Յայնժամ մատուցեալ Նիկոմիդոսս ըմբռնեալ խոր-  
 տակեաց զփականս և բացեալ զտապաննս գտաք արկեղս Գ.  
 մինն էր մեծագոյն մարմարիտն և երեքն արծաթեղէն պատ-  
 կերս քանդակեալս և մատեան միս յորում գրեալ էր ի

մարմարիանեայ յարկեղն։ Այդ նշխարք սրբոյն Գրիգորի է, և լուսաւորչին հայոց մեծաց։ Եւ էր բարձք նորա իբրև սկայի։ Եւ երկրորդ արկեղն կային նշխարք սրբոյն Հովսէփմեայ՝ ձեռն իւր հասեալ յաւգուածոյն, և այնքան ունէր զվորթ ձեռինն հանգերձ կղընգամբն և մազովն, որպէս առ ժամայն ի բաց հասելոյ ի բոլորն անդամոց, բաց ի թխութենէ ստակութեան քնական մարմնոյն։ Եւ մասեան այսմ՝ զրոյ առնիթեր եգեալ ի տապանին։ Եւ յերրորդում արկեղն գտաք զնշխարս սրբոյն Գայիանէ, և ի միւսումն զայլ սրբոցն՝ զՍարգսին և զԿաղոսին, հանդերձ այլ սրբովք, զորս զյիշատակս նոցունց անուանց ոչ գտաք ի մատենի անդ։ Եւ հանեալ արտաքս, և առաջի անկեալ հանդերձ բազմութեամբ ժողովելոցն և ի ծունր իջեալ՝ մատուցաք երկրպագութիւն։ Եւ իտիոյն ազդ արարեալ մեծի թագուհւոյն, զայ մեծաւ ուրախութեամբ յերկրպագութիւն՝ հանդերձ Միքայելիլ որդւով իւրով և այլ պատուաւորաւք քաղաքին։ Առեալ և պատրիարկին Փոսայ զուխս սուրբ եկեղեցւոյն Սոփիայ, և զաւրաց շուրջանակի հպաւորագոյնս, և զիմեալ ամենեցուն առ հասարակ ի հրաշալի նշխարս սրբոյն՝ յայտնելոյն հրաշափառ նշանաւք և երևելի փայլմամբք, և հանդիպեալ աստուածային դանձուցն նշխարաց սուրբ Լուսաւորչին և այլ սրբոցն, զորս վերնագոյն ասացաք, և ամենեքին աւրհնէին զամենասուրբ Նրբորդութիւնն։ Եւ ըստ արժանաւորութեան սրբոցն փոխեցին մեծագոյն պատուով առ ի նոյն հանգիստ՝ ուրախութեամբ մեծաւ, ջահիւք լուցելովք և զամբարաւք բորբոքելովք և բազում անուշահոտ բուրմամբք զանազանեալ խնկոց։ Եւ սահմանեցին զաւրն զայն ամ ըստ ամէ, զյիշատակս՝ առ ի տաւնախմբել ի նմին աւուր հաւաքեալ առ հասարակ, զի հոգևորապէս տաւնեցին զյիշատակս նոցա։ Եւ իրագործեցան ասացեալքս ի քառասներորդսն մեծի պատեքին, ի հինգերորդում շաբաթունս— Ի ժամանակս տեսան Գեորգեայ Հայոց կաթուղիկոսի և Աշոտոյ բարեպաշտի կարգեցաւ տաւն սրբոյն Գրիգորի ի փառս ամենասուրբ Նրբորդութեանն։ Վասն որոյ և մեք կատարեսցուք զյիշատակ հայրապետին մերոյ և փառաւորեսցուք զսուրբ

զերբորդութիւնն. զի զկառարեալ բարինն ընկայցուք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս:

Գրիգորինոս Հայոց մեծաց,  
 Որ գովեցար յանթիւ լեզուաց,  
 Տաւնեմք զյայտնիլ քոյդ նշխարաց,  
 Զի քեւ հասցուք անձառ փառաց:

### Մ Տ Ա Յ Ո Ւ Ա Ճ Գ Ր Զ Ե Ր

1. Ազգար Փարպեցու ձեռագրերը. — Գալուսա Տէր Մկրտչեան. 1902 թ.
2. Գրիգոր — Մանածիհր Ռաթիկ, Միհրան տոհմից. — Նոյն. Աաղարչապատ, 1902 թ.
3. Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս. — Նոյն. Աաղարչ. 1902 թ.
4. Ստեփանոս իմաստասէր.

Այս բոլոր դրուածները արտատպութիւն են 1901, 1902 թ. «Արարատներից, և լերջին երեքը հին, կարևոր յիշատակարանների հրատարակութեան մի շարք են կազմում, որի մէջ մանուկ է նաև «Արարատի նախընթաց համարում տպուած «Գաւիթ Հարքայի»: Ինչպէս մանաւանդ այս լերջինիս, այնպէս նաև միւսներին կցուած նախաբանների ու ծանօթութիւնների մէջ հրատարակիչը խիստ համարձակ և հետաքրքրական կարծիքներ է յայտնում՝ Զ—Ղ դարերի մեր եկեղեցւոյ դաւանական զարգացման և դրականութեան լերջերեալ, որոնք մանրակրկիտ ուսումնասիրութիւնների և խորհրդածութիւնների նիւթ են և որոնցով զբաղուել կարելի է աւելի այն ժամանակ, երբ նա ինքը, ինչպէս խոստանում է, կրկին այդ խնդիրներին դառնայ և աւելի մանրամասնօրէն ու հիմնաւոր փաստերով հաստատէ իւր ասածները: Առ այժմ հարևանցի կերպով ուշադրութիւն կհրաւիրենք երկու կէտի լերայ: — «Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս» զրբոյկի էջ 5 ասած է. «Յակոբիկների յիշատակութիւնը (Հարց. ԺԱ) լեցեւոր դարի կիսում անտեղի չէ, թէև կանուխ յիշատակութիւններից մէկը»: Մենք կասենք՝ ո՛չ միայն անտեղի, այլ բոլորովին անհնարին է. որովհետև Յակոբ Բարազէոս կամ Ծանծալոս Եղեօխայի եպիսկոպոս էր 543—578 թ. ներին և նորա գործունէութիւնը՝ «մի ընտ. թիւն» դաւանողներին ի մի ժողովելու և առանձին եկեղեցի կազմակերպելու համար, ընկնում է Ն. տիեղերա-